ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2022, հ. 75, N 3, 60-62
Известия НАН РА, Науки о Земле, 2022, т. 75, N 3, 60-62
Proceedings NAS RA, Earth Sciences, 2022, v. 75, N 3, 60-62

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԻ
(ծննդյան 120-ամյակին)
(1902-1950)

Լրացավ մեծանուն երկրաբան, երկրաբանամիներալոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Ստեփանյանի ծննդյան 120-ամյակը: Ծնվել է 1902թ. Ալեքսանդրապոլ (ներկայումս Գյումրի) քաղաքում: 1921թ. տեղի կոմերցիոն ուսումնարանն ավարտելուց հետո ուշիմ երիտասարդն ընդունվում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտ, իսկ 1925թ. տեղափոխվում է Նովոչերկասկ քաղաքի Դոնի պոլիտեխնիկական ինստիտուտ, ուր 1930թ. ստանում է լեռնային ճարտարագետի որակավորում:

Դեռևս ուսանողական տարիներին մասնակցում է Հայաստանի Արարատյան դաշտավայրի և Զորագետի տարածքի երկրաբանական ուսումնասիրություններին, ինչպես նաև ղեկավարում է Դոնի պոլիտեխնիկական ինստիտուտի Հյուսիս-Կովկասյան մարզի գրունտերի և ջրերի ֆիլտրացիայի լաբորատորիան: Ուսումն ավարտելուց հետո երիտասարդ մասնագետը սկզբում կարճ ժամանակով աշխատում է Զանգեզուրի պղնձի կոմբինատում որպես երկրաբան, իսկ այնուհետև տեղափոխվում է Ալավերդու պղնձաձուլական կոմբինատ՝ որպես գլխավոր երկրաբան՝ ամբողջովին նվիրելով իր հետագա գիտաարտադրական կարճատև, բայց բեղուն գործունեությանը հյուսիսային Հայաստանի մետաղական օգտակար հանածոների՝ առավելապես պղնձահիրաքարային հանքավայրերի ուսումնասիրությանը:

1935թ. Հ. Ստեփանյանին հրավիրում են ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետ, որտեղ, ֆակուլտետի պատմության մեջ առաջին անգամ, սկսում է դասավանդել Հայաստանի մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոներ առարկան: Նույն թվականին սկսում է աշխատել նաև ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) նորաստեղծ երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող՝ հաջողությամբ համատեղելով դասախոսական և արտադրական գործունեությունը գիտական աշխատանքի հետ: 1939թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն

«Ախթալայի բազմամետաղային հանքավայրի հետազոտությունները» թեմայով:

1938թ.-ից մինչև կյանքի վերջը (1950թ.) եղել է երկրաբանական ֆակուլտետի անփոփոխ դեկանը՝ միաժամանակ աշխատելով որպես նույն ֆակուլտետի կիրառական երկրաբանության ամբիոնի վարիչ, իսկ 1950թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1948թ. Հ. Ստեփանյանը պաշտպանում է «Հյուսիսային Հայաստանի պղնձի հանքավայրերի երկրաբանությունը» թեմայով դոկտորական ատենախոսություն:

Այս մեծածավալ աշխատության մեջ առաջին անգամ ընդհանրացվել և բազմակողմանիորեն վերլուծվել են Հյուսիսային Հայաստանի պղնձահիրաքարային (Ալավերդի, Շամլուղ) և բազմամետաղային (Ախթալա և այլն) հանքավայրերի երկրաբանական կառուցվածքին, մետաղածնությանը, մագմատիզմին, շերտագրությանը և տեկտոնիկային առնչվող հարցերը: Գիտնականը հիմնավորում է, որ այս հանքավայրերում հնարավոր է հայտնաբերել շտոկվերկային և այլ տիպի հանքայնացումներ: Ճշգրտել է այսպես կոչված ստորին պորֆիրիտների (կանաչավուն անդեզիտների) տեղադիրքը (Լալվարի շերտախումբ, օքսֆորդ՝ ըստ Ն. Ազարյանի), ինչպես նաև մատնանշել է Ախթալայի բազմամետաղային հանքավայրի շրջակայքի հանքաբեր քվարցային անդեզիտների (վերին բայոս)՝ ավազաքարերը պատռող բնույթը:

Գիտնականն առաջինն է ուսումնասիրել նաև Հյուսիսային Հայաստանի (Լալվար-Ստեփանավանի տեղամաս) կայնոզոյան հասակի գրանիտային ինտրուզիաների (Լալվար, Ուռուտ, Կողես, Յաղդան և այլն) երկրաբանական առանձնահատկությունները, ծագումնաբանությունը և պետրոլոգիան:

Մեծ է գիտնականի ավանդը Հայաստանի ոչ մետաղական օգտակար հանածոների ուսումնասիրության գործում: Մասնավորապես, Հ. Ստեփանյանը մանրամասն հետազոտել է Արթիկի, Անիի և Երևանի շրջակայքի հրաբխային տուֆերի հանքավայրերը, Հյուսիսային Հայաստանի Շահնազարի գունավոր տուֆերը, ինչպես նաև Ծաթերի և Բերդավանի ֆելզիտային տուֆերը: Ուսումնասիրել է նաև ալյումինի հումքի համար պիտանի բոքսիտանման ապարների հանքերևակումները Նոյեմբերյանի, Սպիտակի, Դիլիջանի, Աղվերանի և այլ շրջաններում: Ա.Ն. Ամրոյանի հետ համատեղ դեռևս 1940-ական թվականների վերջերին ուսումնասիրել է նաև մերձերևանյան տարածքի հնարավոր նավթաբերության հարցերը:

Հ. Ստեփանյանը զգալի ավանդ ունի նաև երկրաբանության հանրամատչելիության և հանրահռչակման մեջ: Ուշագրավ է դեռևս 1946թ. նրա «Հայկական ՍՍՌ ռելիեֆի առաջացման հիմնական էտապները» գրքույկը՝ գրված պարզ հանրամատչելի լեզվով: Կարևոր է նշել, որ դուրս գալով այդ ժամանակ ընդունված ֆիքսիստական տեսության գիտական սահմաններից՝ հեղինակը, դրսևորելով լայնախոհություն հայ երկրաբանության պատմության մեջ, այս գրքում որպես ռելիե-

ֆածին հիմնական գործոն բազմիցս ընդգծում է հորիզոնական կամ տանգենցիալ շարժումների գերակայությունը: Այդ հետաքրքիր աշխատանքը ցայսօր չի կորցրել իր արդիականությունը և ճանաչողական արժեքը:

Հ.Ստեփանյանը վախճանվել է 1950թ. Հուլիսի 11-ին Մոսկվայում:

Ընդհանուր առմամբ իր կարճատև, բայց բեղմնավոր 20-ամյա գիտական գործունեության ընթացքում անվանի երկրաբանը հեղինակել և համահեղինակել է 11 գիտական աշխատություն՝ այդ թվում 3 մենագրություն և 20 ձեռագիր հաշվետվություն: Հ. Ստեփանյանը մեծ հեղինակություն էր վայելում և մտերմիկ հարաբերություններ ուներ ժամանակի երկրաբանության այնպիսի ռահվիրաների հետ, ինչպիսիք էին Հ.Տ. Կարապետյանը, Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգը, Ա.Ն. Զավարիցկին, Կ.Ն. Պաֆֆենհոլցը, Վ.Վ. Գրուշեվոյը և այլք:

Հայկ Մելիք-Ադամյան